Եղիշե Չարենց

Դանթեական առասպել

VI

Մեռած Քաղաքից մենք ճամփա ընկանք
Ճի՛շտ դեպի կռիվ դեպի ռազմավայր:
Գնում էինք մենք՝ համառ և ուրախ
Կռվելու, կռվով մեռնելու համար:
Նահանջում էր դեռ թշնամին արագ
Եվ չէինք մենք դեռ հանդիպում իրար:

Թնդանոթները թնդում էին թունդ,
Եվ սրտատրոփ տեսնում էինք մենք,
Թե ինչպես այնտեղ, լեռներում կապույտ
Ավեր է փռում նա, հարված ու վերք,
Ու դառնում են շեն գյուղեր մոխրակույտ,
Եվ ծուխը կապույտ, բարձրանում է վեր:

Եվ գնում էինք առաջ ու առաջ՝
Ձյունապատ լեռան ահավոր կողով:
Դժվար էր ուղին: Բայց աչքերս հառած
Փախչող թշնամուն՝ անբուն մի կորով

Մղում էր մեզ միշտ առաջ ու առաջ
Եվ սրտերս այրում քանդումի հրով:

Երբ մենք, մի վայրկյան, հանգստի համար,
Կանգնեցինք լեռան ճերմակ գագաթին
Նայեցի հեռուն: Վարը, հողմավար,
Ծովն է աղմկում գանգատով մթին:
Զարնվում էին ջրերը իրար,
Ու խուլ, ու վարար մորմոքում էին:

Արձիճի նման գորշ, անփայլ ու մութ
Փռվել էր իմ դեմ ծովը հողմակոծ:
Գորշացել էին ջրերը կապույտ
Ու գորշ էր թվում աշխարհը ամբողջ:
Եվ ինչ-որ մի խոր ու տխուր խորհուրդ
Համակեց հանկարծ էությունս ողջ:

Եվ ծեր, ծովի պես, ծանրացավ հոգիս:
Ու կատակ թվաց արած գործը մեր:
Բայց լուռ բարձրացա, քայլեցի նորից:
Թնդանոթները թնդում էին դեռ:
Լցվել էր հոգիս անբառ մի կսկիծ՝
Թվում էի ինձ մենա՜կ ու անտեր:

Հանկարծ կանգ առա ես ձորամիջին:
Այլանդակ մի դի փռված էր իմ դեմ:
Նրա մոտ ընկած վիրավոր մի ձի
Զղաձգորեն մեռնում էր արդեն:
Հե՜յ, մի քիչ առաջ, հլու իր սանձին՝
Սա՛ էլ էր փախչում այս վայրից գեհեն:

Ո՞ւր էիր փախչում, խղճո՛ւկ անասուն…
Քեզ քո տերն այստեղ ծեծելո՞վ բերեց:
Բայց նա չգիտե՞ր, որ այս երազում
Միայն Մա՛հն է տեր՝ անողոք ու մեծ:

Էլ ինչո՞ւ էր նա ավերել ուզում,
Այս դաժան մարտին ո՞վ նրան հրեց:

Տե՛ս, այլանդակված այժմ ընկած է նա:
Սևացել է, տե՛ս, արճիճի նման:
Անթաղ, անշիրիմ այստեղ կմնա,
Ոչ ոք չի՛ փորի նրան գերեզման
Ոչ ոք չի՛ տխրի, որ նա զոհ եղավ
Մի արնածարավ, անիմաստ ցասման:

Չգիտեմ ինչու, կամքիս հակառակ,
Նայեցի ահով նրա երեսին,
Ու առաջ անցա քայլերով արագ,
Հոգուս բեռ արած խեղճությունը իմ:
Իսկ մերոնք, անմար եռանդով վայրագ,
Կռվում էին դեռ ու քանդում էին:

Հուր ու ծխի մեջ օրը վերջացավ
Եվ մենք կանգ առանք լեռան փեշի մոտ:
Հուր ու ծխի մեջ թշնամին անցավ՝
Ուսին շալակած պարտություն, ամոթ:
Եվ ամեն անկում, ամեն վերք ու ցավ
Ծածկեց գիշերվա վարագույրը տոթ:

Եվ մենք ետ դարձանք դաշտերից մարտի՝
Հանգստանալու հեռավոր գյուղում:
Հեռուն՝ մի այրած, սևասև արտի
Ցողուններն էին ծուլորեն մխում:
Ու քայլում էինք՝ հոգնած, անոթի,
Աշնան գիշերի մեգ-մառախուղում:

Երկու ընկերով քայլում էինք լուռ՝
Հոգնած զինվորի եռանդով անշեջ:

Մեռելի նման ահավոր, տխուր
Ծովն էր տարածվել մշուշոտ ու գեշ1:
Գնում էինք լուռ, չգիտեմ թե ո՛ւր՝
Միշտ նո՛ւյն ծովափով անվե՛րջ ու անվե՛րջ:

Երբ ուրվագծվեց մշուշում մի լեռ
Ասացին, որ գյուղն այնտեղ կլինի:
Բայց ծալվում էին սրունքները մեր.
Ընկերս ուզեց, որ ընկնի, քնի
Բաց երկնքի տակ, գյուղ չհասա՛ծ դեռ,
Հենց ճամփի վրա՝ ինչ կուզե լինի:

Ու մնաց այնտեղ: Ես անցա առաջ:
Նրան երևի ձիով կբերեն:
Վերելքը ծանր էր, ծանր էր՝ ի՞նչ արած…
Պետք է իմ բոլոր ուժերը լարեմ,
Հասնեմ նո՛ր քնեմ հոգնած, խոնջացած,
Որ երազները հոգիս օրորեն:

Բարձրանում էի: Վայրենի քամին
Ծեծում էր կուրծքս ահռելի ուժով
Եվ մթնում էին հայացքները իմ,
Լցվում էր հոգիս թանձր մշուշով:
Բայց ճիգ թափելով մի գերմարդկային՝
Ես քայլում էի լուռ, ուշի-ուշով:

Մենակ, անընկեր: Հսկա բուի պես
Ավազե մատներն աչքերիս հառած՝
Ոռնում էր քամին: Ընկնում էի ես,
Նորից բարձրանում ու անցնում առաջ:
Երբեք չէր եղել մարմինս այնքան հեզ,
Եվ ոգիս այնքան կամքի ուժ առած:

Ու վատնում էի ճիգերս հետին:
Գագաթը մոտ է կհասնեմ հիմա:
Բայց հանկարծ քամին շպրտեց գետին,
Դեպի անդունդը՝ ուղի՛ղ դեպի մահ:
Բայց ո՛չ… Մեռնողի բնազդով մթին
Գրկեցի քարերն ու ոտքի ելա:

Քայլեցի նորից: Եվ հանկարծ իմ դեմ
Փռվեց լույսերի մի ոսկի մշուշ:

Ա՜, հասել էի ես գյուղը արդեն:
Հասել էի ես: Կես-գիշեր էր ուշ:
Եվ ցուրտ խրճիթի խոտերի մեջ թեն
Քնեցի անո՛ւշ, քնեցի անո՛ւշ…